Տասներկուերորդ հաղորդում

Շնորհներ Տվողը և Աստծու սպառազինության բաղադրիչները

Գրվածքների ընթերցում. Եփս 4:7-16, 6:10-20

I. Եփս 4:7-16-րդ խոսքերը մեզ են ներկայացնում Քրիստոսին՝ որպես Քրիստոսի օրգանական Մարմնի խորքային կառուցման համար շնորհներ Տվողի. այս կառուցումը տեղի է ունենում Քրիստոսի շնորհի չափի համապատասխան աստվածային շնորհքը տալու՝ բաշխելու շնորհիվ.

Ա. Քրիստոսի Մարմնի յուրաքանչյուր անդամ Մարմնի համար անփոխարինելի շնորհ է՝ խ. 7, Ա Կրթ 12:14-22, Հռմ 12:4-5.

1. Քրիստոսի շնորհն այն մարդն է, որը կազմված է Աստվածային Երրորդության կողմից իր մեջ բաշխված Քրիստոսի կյանքով և տարրով՝ հմմտ Բ Կրթ 1:15:
2. Յուրաքանչյուր օժտված մարդ որոշակի չափ ունի, և աստվածային շնորհքը նրան տրվում, նրա մեջ բաշխվում է այդ չափի համաձայն՝ Եփս 4:16, հմմտ Հռմ 12:3:

Բ. Քրիստոսի օրգանական Մարմնի խորքային կառուցումը տեղի է ունենում այն բանի շնորհիվ, որ Քրիստոսը՝ որպես Իր համբարձման (Իր հարությունը ներառող) մեջ եղող Գլուխը, Իր Մարմնին օժտված մարդիկ է տալիս, ինչպիսիք են առաքյալները, մարգարեները, ավետարանիչներն ու հովիվները և ուսուցիչները, որոնք կազմվում են Աստվածային Երրորդության բաշխմամբ՝ Եփս 4:8-12.

1. Եփս 4:8-ում ասվում է. «Բարձունքը ելնելով՝ Նա գերեվարվածներին գերության տարավ ու մարդկանց շնորհներ տվեց».
   - ա. Սղմ 68:18-ից մեջբերված «բարձունք»-ը վերաբերում է Սիոն լեռանը (խխ. 15-16), որը խորհրդանշում է երրորդ երկինքը, որտեղ Աստված է բնակվում (Գ Թգ 8:30):
   - բ. Սղմ 68-ում ենթադրվում է, որ երբ Տապանակը հաղթանակ էր տարել, Աստված, Տապանակի մեջ լինելով, Սիոն լեռը բարձրացավ (Թվց 10:35). սա պատկերում է, թե Քրիստոսն ինչպես հաղթանակ տարավ ու հաղթականորեն երկինքներ համբարձվեց:
   - գ. Քրիստոսն Իր համընդհանուր երթևեկի և Իր համբարձման միջոցով գերության տարավ նրանց, ում Սատանան գերեվարել էր, և նրանց շնորհներ դարձրեց Իր Մարմնի համար՝ Եփս 4:8-11.
     1) Սատանան գերեվարել էր փրկագնված սրբերին նախքան նրանց՝ Քրիստոսի մահով և հարությամբ փրկվելը՝ հմմտ Ղկս 4:18:
     2) Իր համբարձման մեջ Քրիստոսը նրանց գերեվարեց, այսինքն՝

Սատանայի գերությունից ազատեց ու Իրեն վերցրեց՝ Սղմ 68:18:

3) Իր համբարձման մեջ Քրիստոսն Իր հաղթված թշնամիների շարասյան մեջ նրանց՝ որպես Իր գերիների, տարավ դեպի երկինքներ ու նրանց Իր Մարմնի համար շնորհներ դարձրեց:

4) Հիմա Քրիստոսը Իր հաղթանակն է տոնում նրանց՝ Իր հաղթված թշնամիների հանդեպ և նրանց՝ որպես Իր գերիների, առաջնորդում է հաղթահանդեսում Իր շարժման մեջ՝ Իր Մարմինը կառուցելու սպասավորությունն իրագործելու համար՝ Բ Կրթ 2:14:

2. Որքան Քրիստոսը շատ է բարձրանում և իջնում մեր ներսում՝ գերեվարելով ու հաղթելով մեզ, այնքան ավելի շատ է մեզ լցնում Իրենով՝ մեզ կազմությամբ Իր Մարմնի համար շնորհներ դարձնելու համար՝ հմմտ Եփս 4:9-10:

Գ. Քրիստոսի օրգանական Մարմնի խորքային կառուցումը տեղի է ունենում այն բանի շնորհիվ, որ օժտված մարդիկ աստվածային բաշխման մեջ կատարելագործում են սրբերին, որպեսզի բոլոր սրբերը կարողանան կատարել նորկտակարանյան սպասավորության աշխատանքը, այսինքն՝ կառուցել Քրիստոսի Մարմինը՝ խխ. 11-12.

1. Օժտված մարդիկ սրբերին կատարելագործում են՝ նրանց ըստ կյանքի ծառի կենսամատակարարմամբ սնելով, որպեսզի նրանք աճեն կյանքում՝ Ծնդ 2:9, Ա Կրթ 3:2, 6:

2. Օժտված մարդիկ սրբերին կատարելագործում են՝ անելու այն, ինչ իրենք են անում՝ Քրիստոսի Մարմինն անմիջականորեն կառուցելու համար՝ Մտթ 16:18, Եփս 4:11-12, հմմտ Ա Տմթ 1:16, 4:12:

3. Այս կատարելագործման արդյունքում մենք բոլորս հասնելու ենք հավատքի և Աստծու Որդու լիակատար գիտության միասնությանը, չափահաս այր լինելուն և Քրիստոսի լեցունության հասակի չափին՝ Եփս 4:13, հմմտ Հվի 17:23:

4. Այս կատարելագործումը մեզ կմղի՝ այլևս չլինելու փոքր երեխաներ, որոնք տարուբերվում են ալիքներից և ուսմունքի ամեն քամուց քշվում մարդկանց խարդախությամբ, մոլորության սատանայական համակարգը նպատակ ունեցող խորամանկությամբ՝ Եփս 4:14:

5. Այս կատարելագործման շնորհիվ Քրիստոսի Մարմնի յուրաքանչյուր անդամ կդառնա սիրո մեջ կառուցող անդամ՝ ներաճելով Գլխի մեջ և գործառելով Գլխից՝ խխ. 15-16:

II. Եփս 6:10-20-րդ խոսքերը բացահայտում են, որ Քրիստոսն Աստծու սպառազինության բաղադրիչներն է.

Ա. Աստծու ողջ սպառազինությունը Քրիստոսի ամբողջ Մարմնի՝ որպես ընդհանրական ռազմիկի համար է, այլ ոչ թե Մարմնի որևէ առանձին անդամի համար. մենք հոգևոր պատերազմը պետք է մղենք Մարմնում, այլ ոչ թե առանձին-առանձին՝ խխ. 10-13, Հկբ 4:7, հմմտ Հռմ 13:12-14, Երկ Օր 32:30:

Բ. Եփեսացիներին ուղղված թղթի 2-րդ գլխում մենք Քրիստոսի հետ նստած ենք երկնային ոլորտներում՝ մասնակցելով Նրա բոլոր նվաճումներին (խ. 6). 4 և 5-րդ գլուխներում քայլում ենք Նրա Մարմնում երկրի վրա՝ իրագործելով Աստծու հավիտենական մտահղացումը (4:1, 17, 5:2, 8, 15). ապա 6-րդ գլխում կանգնած ենք Նրա զորության մեջ երկնային ոլորտներում՝ պատերազմելով Աստծու թշնամու դեմ (խխ. 11, 13-14, հմմտ Ա Հվի 5:4, 18, Հվի 3:6բ):

Գ. «Ուրեմն կանգնե՛ք՝ ձեր մեջքը ճշմարտությամբ գոտևորած»՝ Եփս 6:14ա.

1. «Ճշմարտություն»-ը վերաբերում է Աստծուն Քրիստոսի մեջ՝ որպես իրականություն մեր ապրելակերպում, այսինքն՝ Աստծուն, ով մեր իրականությունն ու ապրումն է դառնում մեր ապրելակերպում. սա, ըստ էության, Քրիստոսն Ինքն է, ում մենք արտահայտում ենք մեր ապրելակերպում՝ 4:15, 21, 24-25, Հվի 14:6, 8:31-32, 36:
2. Այն ճշմարտությունը, որով գոտևորվում ենք, իրականում Քրիստոսն Ինքն է, ում փորձառաբար ապրում ենք. քանի որ Պողոսի ապրելակերպը կերպարանակցված էր Քրիստոսի նմուշին, նա ի զորու էր տանելու ողջ հակառակությունը և անբարենպաստ հանգամանքները՝ Եփս 4:20-21, Փլպ 1:19-21ա:

Դ. «Արդարության լանջապանակը հագած»՝ Եփս 6:14բ, Ա Կրթ 1:30, Երմ 23:6.

1. Քրիստոսը՝ որպես արդարության լանջապանակը, ծածկում է մեր խիղճը, որը խորհրդապատկերված է կրծքով. Սատանայի՝ մեր ամբաստանիչի դեմ պատերազմելու համար մեզ արյամբ մաքրված խիղճ՝ անխոչընդոտ խիղճ է անհրաժեշտ՝ Եբր 9:14, 10:22, Գրծ 24:16:
2. «Եվ նրանք նրան հաղթեցին Գառան արյան շնորհիվ» (Հյտ 12:11). Սատանայի ամբաստանություններին մեր արձագանքը պետք է լինի. «Ես Սատանային՝ ամբաստանողին, հաղթում եմ ոչ թե իմ կատարելությամբ և նույնիսկ ոչ էլ իմ անխոչընդոտ խղճի շնորհիվ, այլ Գառան արյան շնորհիվ. ես պաշտպանված եմ նրա մեղադրանքներից արդարության լանջապանակով»:

Ե. «Եվ խաղաղության ավետարանի ամուր հիմքը ձեր ոտքերին հագած»՝ Եփս 6:15.

1. Քրիստոսը խաչի վրա մեզ համար թե՛ Աստծու, թե՛ մարդու հետ խաղաղություն հաստատեց, և այս խաղաղությունը մեր ավետարանն է դարձել. խաղաղության այս ավետարանը հաստատվել է որպես ամուր

հիմք, պատրաստակամություն, որը կարող ենք մեր ոտքերին հագնել՝ 2:13-17:

2. Մենք հոգևոր պատերազմը մղում ենք՝ կանգնելով խաղաղության մեջ. եթե կորցնում ենք խաղաղությունը մեր և Աստծու կամ մեր և այլ հավատացյալների միջև, կորցնում ենք պատերազմելու դիրքը՝ Կոլ 3:15:

Զ. «Այս ամենից բացի՝ հավատքի վահանը վերցրած, որով կկարողանաք չարի բոլոր բոցավառված նետերը հանգցնել»՝ Եփս 6:16, Բ Կրթ 4:13, Եբր 12:2.

1. Բոցավառված նետերը Սատանայի փորձությունները, առաջարկները, կասկածները, հարցերը, ստերն ու հարձակումներն են. մենք պետք է վերցնենք հավատքի վահանը, որպեսզի հանգցնենք այս բոցավառված նետերը:
2. Մենք պետք է վարժենք հավատքի մեր հոգին՝ ենթարկված և հարուցանված կամքով հանդերձ, որպեսզի հավատանք, որ Տիրոջ հայտնի դարձվելը բանսարկուի գործերը ոչնչացնելու համար է՝ Ա Հվի 3:8, Մտթ 16:22-23, Ղկս 4:39-41, Մտթ 12:28, Ղկս 10:17, 19:
3. Մենք պետք է վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի հավատանք, որ Տիրոջ մահը ոչնչացրել է Սատանային՝ Եբր 2:14, Ծնդ 2:17, 3:15, Գղտ 2:20, Հռմ 6:3-6, Ա Կրթ 15:54-58:
4. Մենք պետք է վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի հավատանք, որ Տիրոջ հարությունը ամոթահար է արել Սատանային ՝ Կոլ 2:12-15, 20, 3:1, Հվի 14:30, Փլպ 3:10, Եսյ 61:10, Զք 3:4-5:
5. Մենք պետք է վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի հավատանք, որ Տիրոջ համբարձումը շատ ավելի վեր է Սատանայի զորությունից՝ Եփս 1:19-23, 2:6, 6:11, 13:
6. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու հանդեպ, ով իրական, կենդանի, ներկա և հասանելի է՝ Մրկ 11:22, Հյտ 1:18:
7. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու սրտի հանդեպ. Աստծու սիրտը մեր հանդեպ միշտ բարի է. Նա չունի մեզ պատժելու, մեզ ցավ պատճառելու կամ մեզ կորուստ կրել տալու մտադրություն՝ Հռմ 8:28-39:
8. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու հավատարմության հանդեպ. Աստված չի կարող ստել, Նա միշտ հավատարիմ է Իր խոսքին՝ Ա Կրթ 1:9, Ա Հվի 1:9, Տտս 1:2:
9. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու ընդունակության հանդեպ՝ Եփս 3:20:
10. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու խոսքի հանդեպ. Աստված կապված է այն ամենը կատարելու պարտավորությամբ, ինչ ասել է՝ հմմտ Ա Թսղ 5:24, Եփս 6:17-18:
11. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու կամքի հանդեպ՝ 1:5, 9, 11:
12. Մենք պետք է հավատք ունենանք Աստծու գերիշխանության հանդեպ.

Նրա գերիշխանությամբ նույնիսկ մեր սխալներն են աշխատում բարիքի համար՝ Հռմ 9:19-29:

Է. «Ընդունեցեք փրկության սաղավարտը»՝ Եփս 6:17ա.

1. Փրկության սաղավարտը մեր միտքը, մտածողությունը չարի արձակած բացասական մտքերից ծածկելու համար է. այսպիսի սաղավարտը՝ այսպիսի ծածկոցը, Աստծու փրկությունն է:
2. Սատանան մեր միտքը վախ, սպառնալիքներ, տագնապներ, անհանգստություններ և այլ թուլացնող մտքեր է ներարկում. Աստծու փրկությունն այն ծածկն է, որն ընդունում ենք այս ամենից պաշտպանվելու համար. և այս փրկությունը փրկող Քրիստոսն է, ում փորձառաբար ապրում ենք մեր ամենօրյա կյանքում՝ Հվի 16:33, Փլպ 1:19, Հռմ 5:10, 10:12-13:

Ը. Ընդունեցեք «Հոգու սուրը, Հոգու, որը Աստծու խոսքն է»՝ Եփս 6:17բ.

1. Աստծու սպառազինության վեց տարրերից միայն Հոգու սուրն է օգտագործվում թշնամու վրա հարձակվելու համար. այս սրի օգնությամբ մասնատում ենք թշնամուն:
2. Քրիստոսի՝ որպես Հոգու և խոսքի շնորհիվ ունենք սուրը՝ որպես թշնամուն հաղթելու և սպանելու հարձակողական զենք:
3. Երբ «լոգոս»-ը (Աստվածաշնչի մշտական խոսքը) մեզ համար դառնում է «ռեմա» (Հոգու ներկա, ակնթարթային, կենդանի և անձնական կերպով խոսելը), այս «ռեմա»-ն սուրն է, որը մասնատում է թշնամուն՝ հմմտ Հվի 6:63:

Թ. «Ամեն աղոթքի ու խնդրվածքի միջոցով՝ ամեն ժամանակ հոգում աղոթելով և դրա համար արթուն լինելով ամենայն հաստատակամությամբ ու բոլոր սրբերի վերաբերյալ խնդրվածքով»՝ Եփս 6:18.

1. Աղոթքը կարելի է Աստծու սպառազինության յոթերորդ տարրը համարել, որովհետև դա այն միջոցն է, որով կիրառում ենք մյուս տարրերը:
2. Աղոթքը Քրիստոսին որպես Աստծու սպառազինությունը կիրառելու եզակի ճանապարհն է. հենց աղոթքն է սպառազինությունը մեզ համար գործնականում հասանելի դարձնում:

© 2024 Living Stream Ministry